ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 78

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28-ը դեկտեմբերի 2024թ.,

Ք. Իջևան

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 28-ը: Նիստին մասնակցում էին նաև Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանը, ԵՊՀ ռեկտորի խորհրդական Վիգեն Խալատյանը, ինչպես նաև Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը և փոխմարզպետ Նարեկ Ղուշչյանը:

Նիստը վարում էր ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Հովհաննես Հովհաննիսյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ 2023-2024թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը:

(Զեկուցող՝ Ա.Հ. Մակարյան)

2. ԵՊՀ ԻՄ 2024թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր ամիսների կատարողականի մասին:

(Զեկուցող՝ Մ.Մ. Մխիթարյան)

3. Ընթացիկ հարցեր:

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում

- Հաստատել նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ 2023-2024թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը» հարցի կապակցությամբ լսեցին **Ա. Մակարյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ 2023-2024 ուստարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն իր գործունեությունը կառուցել է 2022-2026 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանի համաձայն: Պլանավորված գործողություններն ուղղորդված են եղել ապահովելու մասնաճյուղի ռազմավարական 3 նպատակների իրականացումը՝ բարձրորակ կրթություն, գիտություն և նորարարություն, հանրային ներգրավում:

ԵՊՀ ԻՄ-ն իր գործողությունների պլանի շրջանակներում իրականացնում է գործընթացներ, որոնք ուղղված են համալսարանի արդիականացմանը, թվային հարթակների զարգացմանը, արտաքին և միջազգային ակտիվ համագործակցությանը, նոր կրթական ծրագրերի, գիտահետազոտական, մեթոդական և կադրային ճկուն համակարգի զարգացմանը:

Հաշվետվությունը կազմվել է՝ հիմք ընդունելով մասնաճյուղի ֆակուլտետների և այլ ստորաբաժանումների կողմից ներկայացված հաշվետվությունները, 2023-2024 ուստարվա աշխատանքային պլանների կատարողականները, մասնաճյուղի գործունեության գնահատման արդյունքային ցուցանիշների (ԳԱՑ - 2019-2024 թթ.) լրակազմը:

Այնուհետև Ա. Մակարյանը Մասնաճյուղի՝ 2023-2024 ուստարվա գործունեությունը ներկայացրեց ըստ հետևյալ 9 բաժինների՝ 1. Դիմորդների մասնագիտական կողմնորոշում և ընդունելություն, 2. Կրթական ծրագրեր, 3. Ուսանողների հաջողությունները, 4. Կրթության երրորդ աստիճան, 5. Ակադեմիական համակազմի նկարագիր և կարողությունների զարգացում, 6. Գիտահետազոտական գործունեություն և մասնակցություն ֆինանսավորվող գիտական նախագծերին, 7. Գործընկերների հետ համագործակցություն, 8. Շրջանավարտներ, 9. Ենթակառուցվածքներ և պայմաններ, և եզրափակեց «Հետագա անելիքներ»-ով:

Մասնավորապես նշվեց, որ ուսումնական գործունեություն բնագավառում Մասնաճյուղը նոր զարգացումներ է իրականացրել ուսումնական ծրագրերի բարելավման գործում՝ դրանք համապատասխանեցնելով ներկա մասնագիտական պահանջներին: Դասավանդման որակը բարելավելու նպատակով կազմակերպվել են դասախոսների վերապատրաստման ծրագրեր, իսկ ուսանողների ընդունելության ու առաջադիմության մակարդակը եղել է բարձր: ԵՊՀ ԻՄ-ում բարձրացել է գիտական հոդվածների ու զեկույցների քանակը, ինչպես նաև ինտենսիվացել է միջազգային համագործակցությունը: Ուսանողները ակտիվ մասնակցել են գիտահետազոտական նախագծերում, ինչը նպաստել է գիտության զարգացմանը: Վերանորոգվել և արդիականացվել են ենթակառուցվածքները՝ ուսանողների համար ավելի հարմարավետ և արդյունավետ ուսումնական պայմաններ ապահովելու նպատակով: Ուսանողները ստացել են պրակտիկայի հնարավորություններ, շրջանավարտները՝ աջակցություն աշխատանքի գտնելու հարցում, իսկ նոր գործընկերությունների միջոցով մասնաճյուղը ուժեղացրել է իր կապերը տեղական և միջազգային գործատուների հետ՝ ընդլայնելով ուսանողների կարիերայի հեռանկարները: Մասնաճյուղը կազմակերպել է բազմաթիվ կրթական, մշակութային և հասարակական միջոցառումներ, որոնք նպաստել են ԵՊՀ ԻՄ հեղինակության բարձրացմանը:

Այնուհետև Ա. Մակարյանը նշեց, որ այս տարվա գործունեության ամփոփմամբ կարելի է ասել, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը կարողացել է արդյունավետ և շարունակական զարգացում ապահովել՝ հիմնված իր 2022-2026 թթ. ռազմավարական ծրագրի վրա:

ԵՊՀ ԻՄ 2023-2024 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվության մանրամասներին կարող եք ծանոթանալ հավելված 1-ում:

Արտահայտվեցին – Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը և այլք:

ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը՝ շնորհակալություն հայտնեց ԵՊՀ ԻՄ 2023-2024 ուստարվա գործունեության վերաբերյալ ներկայացրած մանրակրկիտ հաշվետվության համար, ընդգծելով, որ Մայր բուհը պատրաստ է ամեն ինչ անել, որ Մասնաճյուղը լիարժեք ընդգրկվի պլանավորման և իրականացման ԵՊՀ ընդհանուր բոլոր պրոցեսներում:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ

- «ԵՊՀ ԻՄ-ի 2023-2024թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը ›› հարցի կապակցությամբ **Ա. Հ. Մակարյանի** հաղորդումն ընդունել ի գիտություն:

Օրակարգի երկրորդ՝ « ԵՊՀ ԻՄ 2024թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին» հարցի կապակցությամբ լսեցին **Մ.Մ. Միսիթարյանի** հաղորդումը:

Մ. Միսիթարյանը նշեց, որ հաշվետու ֆինանսական տարվա մուտքերը (եկամուտները) կազմում են 400.009,5 մլն. ՀՀ դրամ, իսկ ելքերը (ծախսերը) կազմում են 467.039,1 մլն. ՀՀ դրամ: Նախորդ ֆինանսական տարվանից մնացորդը կազմել է 77.890,0 մլն. ՀՀ դրամ: Մուտքերի 61%-ը (244.731,0 մլն. ՀՀ դրամ) վճարովի ուսուցման ծառայություններից է, 23%-ը (93.043,0 մլն. ՀՀ դրամ) պետական ֆինանսավորումից է: Ելքերի 84.4%-ը (394.109,0

մլն. ՀՀ դրամ) «Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումներ»-ն են: Ելքերի 1.6%-ը (7.631,0 մլն. ՀՀ դրամ) ուղղվել է ուսանողների կրթաթոշակներին: Մ. Մխիթարյանի զեկույցը կարող եք տեսնել հավելված 2-ում:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, *որոշեցին.*

ՈՐՈՇՈՒՄ

- «ԵՊՀ ԻՄ 2024թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր ամիսների կատարողականի մասին» հարցի վերաբերյալ գլխավոր հաշվապահ **Մ. Մխիթարյանի** հաղորդումը ընդունել ի գիտություն:

Այնուհետև ելույթ ունեցավ ԵՊՀ ռեկտոր **Հովհաննես Հովհաննիսյանը**: Նա նշեց նաև, որ ս.թ. դեկտեմբերի 25-ին ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նիստում ԵՊՀ ԻՄ նոր տնօրեն է ընտրվել տ.գ.թ. **Մհեր Օթարյանը**: Նա շնորհակալություն հայտնեց ԵՊՀ ԻՄ տնօրենի նախկին պաշտոնակատար **Անուշավան Մակարյանին**՝ անմնացորդ նվիրվածության, արհեստավարժության, աշխատանքում սահմանած բարձր չափանիշների ու ԵՊՀ ԻՄ զարգացման գործում ունեցած հսկայական ավանդի համար և պարգևատրեց նրան ԵՊՀ ոսկե մեդալով: Այնուհետև ԵՊՀ ռեկտոր **Հ. Հովհաննիսյանը** շնորհավորեց ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի կողմից ընտրված ԵՊՀ ԻՄ նոր տնօրեն **Մհեր Օթարյանին**՝ նշելով, որ նրան վստահված այս պատասխանատու պաշտոնը կարևոր առաքելություն է՝ նպաստելու ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կրթական ու գիտական արժեքների ամրապնդմանը, ինչպես նաև համայնքի ու տարածաշրջանի զարգացմանը:

Այնուհետև ելույթ ունեցավ Տավուշի մարզպետ **Հայկ Ղալումյանը**: Նա ևս շնորհակալություն հայտնեց պարոն Ա. Մակարյանին՝ բուհի զարգացման գործում ունեցած մեծ ներդրման համար և հաջողություն մաղթեց պարոն **Օթարյանին**, նշելով, որ Տավուշի մարզի ղեկավարությունը պատրաստ է շարունակական աջակցություն տրամադրել ԵՊՀ ԻՄ-ին:

Այնուհետև ԵՊՀ ԻՄ տնօրեն Մ. Օթարյանը շնորհակալություն հայտնեց Ա. Մակարյանին՝ արդյունավետ համագործակցության, ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝ վստահության համար և նշեց, որ կաշխատի մեծ պատասխանատվությամբ ու հետևողականորեն:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Մ. Մ. ՕԹԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ